**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

*Հարգելի մասնակից*

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության <<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Ելնելով ազգաբնակչության սպասարկման բարելավման պայմաններից և հիվանդների սպասարկումը հարմարավետ և դյուրին դարձնելու պահանջներից, սահմանվում է պարտադիր պայման՝ մատակարարումը պետք է լինի դեղատնից՝ <<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում (գ. Արգավանդ, գ. Ազատաշեն) կամ սահմանակից համայնքներում:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում <<ԱՐԳԱԱՊԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-14-2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Արտաշատ, Աճառյան փողոց, շենք 1 (Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոց) հասցեով, մինչև 2014թ.-ի դեկտեմբերի 12-ը, ժամը՝ 13:30-ը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են՝ գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Արտաշատ, Աճառյան փողոց, շենք 1 (Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոց) հասցեով, 2014թ.-ի դեկտեմբերի 12-ին, ժամը 13:30:

Գնման առարկա է հանդիսանում <<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք և պատվաստանյութերի ձեռք բերումը:

<<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք և պատվաստանյութերի (28 չափաբաժիններից կազմված) տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեններից կազմված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Արգավանդի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի գնումների մասով էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specialist_pp@bk.ru:

**Հարգանքով՝**

**Տնօրեն՝** **Վեհանուշ Մախտեսյան**